



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1320-Ա/Ք

«22» դեկտեմբերի 2011թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1243-Ն ՀՐԱՄԱՆԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին և գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» N 8 արձանագրային որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման և ներդրման կարգը հաստատելու մասին» թիվ 1243-Ն հրամանը:

2. Հաստատել արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման և ներդրման կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

 /ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի
«__» _____ 2011թ. N__ հրամանի

ԿԱՐԳ

ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ մասնագիտական կրթություն) պետական կրթական չափորոշիչների (այսուհետ՝ չափորոշիչ) փորձարկման և ներդրման կարգը:

2. Չափորոշիչի փորձարկում կազմակերպվում է մասնագիտական կրթության ոլորտում դրա ներդրմանն առնչվող մի շարք հարցերի ճշգրտման նպատակով՝ առաջին հերթին չափորոշիչին համապատասխան ուսումնական գործընթացի պլանավորման և իրականացման մանրամասները, մշակված ուսումնական պլանների և ծրագրերի արդյունավետությունը և իրագործելիությունը գործնականորեն ստուգելու, առավել ընդունելի տարբերակներ գտնելու համար:

3. Չափորոշիչի միաժամանակյա փորձարկում իրականացվում է 2-ից ոչ ավել ուսումնական հաստատությունում:

4. Չափորոշիչի փորձարկման նպատակահարմարության վերաբերյալ որոշումը՝ համապատասխան ոլորտային հանձնաժողովի առաջարկությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, ընդունում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

5. Չափորոշիչի փորձարկման տևողություն սահմանվում է 1 լրիվ պարբերաշրջանը (ուսանողի ընդունվելուց մինչև ավարտելը):

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԳՈՐԶԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Ուսումնական հաստատությունների ցանկն, որոնցում փորձարկման նպատակով ներդրվում է չափորոշիչները, հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության

և գիտության նախարարի հրամանով, որը տրվում է փորձարկումը սկսելու ուսումնական տարվա սկզբից՝ առնվազն 3 ամիս առաջ:

7. Չափորոշչի փորձարկման աշխատանքների մեթոդական ապահովումն իրականացնում է Կրթության ազգային ինստիտուտի «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ):

8. Չափորոշչի փորձարկման ընթացքում ուսումնական հաստատությունը, ՄԿՈՒԶԱԿ-ին անհրաժեշտ հիմնավորումներ ներկայացնելով, կարող է կատարել ուսումնաձրագրային փաստաթղթերի ընթացիկ ճշտումներ, փոփոխություններ, որոնք հետագայում ներառվում են ներկայացվող հաշվետվություններում:

9. Չափորոշչի փորձարկում իրականացնող ուսումնական հաստատությունը փորձարկման ընթացքի վերաբերյալ, վեցամսյա պարբերականությամբ, գրավոր հաշվետվություն է ներկայացնում Նախարարություն և ՄԿՈՒԶԱԿ, իսկ փորձարկումն ավարտվելուց հետո՝ ամփոփ հաշվետվություն՝ անհրաժեշտ գնահատումներով և առաջարկություններով:

ՉԱՓՈՐՈՇՉԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԸ

10. Չափորոշչի փորձարկման արդյունքներն ամփոփվում են Նախարարությունում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով սոցիալական գործընկերների և համապատասխան ոլորտների առաջատար մասնագետների:

11. Փորձարկման արդյունքների ամփոփումից հետո Նախարարությունն որոշում է ընդունում չափորոշչի ներդրման կամ վերանայման մասին:

12. Փորձարկման արդյունքներին համապատասխան՝ չափորոշչի և դրան համապատասխան մշակված ուսումնա-ձրագրային փաստաթղթերի վերանայումը սահմանված կարգով կազմակերպում է ՄԿՈՒԶԱԿ-ը:

13. Փորձարկման արդյունքներով վերանայված չափորոշիչը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվելուց և սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո, հաջորդ ուսումնական տարվանից ներդրվում է տվյալ մասնագիտությամբ ուսուցում իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում: